

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈԼԿԱՐԻԱ

Տարեկան . . 12 Ձր.

Վեցամսեայ . 6 "

ԱՐՏԱՍԱՀԱՐԱՆ

Իրիւն քիւ մեկ ծրարով

Տարեկան . . 14 Ձր.

Վեցամսեայ . 7 "

ԱՄԵՐԻԿԱ


Տարեկան 2.60 Տօյար

Վեցամսեայ 1.50 "

Կ Ա Ն Խ Ի Կ

Ծրանոցման տողը

20 սանդիս



Լ Ր Ա Ք Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄՆՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

Հ Ա Ս Յ Է

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България)

Դրոշինը ևս

չեն տրոշիր

Կը խնդրուի մեր յարգոյ բաժանորդներէն որ այլեւս չը պաղեցնեն իրենց բաժնեգրները :

ՊԱՀԱՆՈՂԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԵՏԲԸ

Անցեալի դուռն փորձառութեամբ շատ սուղ գնուած մեծ ճշմարտութիւն մը կայ ապագային համար : Ասիկայ որքան կանուխ հրապարակենք, որքան շուտով ընդունինք և որքան անապարհք զայն իւրացնելու այնքան աւելի մեծ չորիք մը դարձանա՞ծ և մեծ քայլ մը առած կըլլանք դէպի փրկութիւն :

Ասիկայ Սոկրատի բերնով արտայայտուած նշանաբանին մէջ կամփոփուի : «Ծանիր զքեզ» :

Եթէ արտահայտուած ցաղթահալիս կազմակերպուիլ ու հայութեան կոչումը, ազգային ձգտումներու մակարդակը բարձրացնել չը գիտնանք անհատական չանքերով մեր փրկութիւնը տարակուսելի է :

Պէտք է տարակուսիլ որ հայ տարրին մէջ բաւական կորով կայ այս պատմական տագնապէն կենդանի ճողպարելու համար, եթէ մենք չունանանք ժողովուրդին տալ հաստատութիւն մը որը նա (ժողովուրդը) իւրացնէ և դառնայ ապագայի զօրանոր «Վիճակը» :

Մենք այսօր գիտենք թէ ժողովուրդի ամէն դասակարգի վերաբերող անհատներ տրամադիր են—և անկեղծօրէն—իրենց բաժինը ունենալ գործնականապէս ազգային ազատագրութեան մեծ դատին ինպատու :

Յեղափոխականութիւնը կարողացա՞ւ բաւականին վստահութիւն ներշնչել և այս ժողովրդային բարի տրամադրութենէն օգտուելով արդիւնքը հանրային դատին ի նպաստ գործածելու ուղղութեան մէջ դնել :

Ո՛չ : Ուրեմն մեր ջանքերը պէտք է սա մտածումին շուրջը միայն կեդրոնանան : Երեւան բերել վստահելի մի մարմին :

Յեղափոխական մարմինները և բուհայական դասակարգային հակառակորդութիւններու սերմը ցանցին ցեղի մը մէջ ուր դասակարգ գոյութիւն չէ ունեցած : Հայ եկեղեցականութիւնը հոն դարձորէն բաղդատեցին եւրոպական կղերականութեան հետ և ջանացին ժողովուրդի և եկեղեցիին միջև գոյութիւն ունեցող յարաբերութեան կապերը լարել :

Այս բացարձակապէս անիշխանական վիճակին պէտք էր յաջորդէր նոր կրօնքը : Բան մը որ տեղի չունեցաւ : Եւ քաջաշարունակեց : Պէտք է զարմանալ ուրեմն որ այս տեսակ անիշխանական վիճակ մը անսանձ կիրքերու և անվերջ, աննպատակ կռիւներու ծնունդ կուտայ :

Իմ համոզումս է թէ բառին բովանդակ նշանակութեամբը յեղափոխականութիւն չենք ունեցած : այն պատճառով որ յեղափոխական կուսակցութիւններու հիմնադիրները (որոնց ոչ-թրքահայ ըլլալու պարագան միշտ պէտք է ի նկատի ունենալ) օտար հողի վրայ և բացարձակապէս օտար աղբիւրներէ քաղած և կաղժած են ծրագիրներ թրքահայաստան հայութեան համար :

Իսկ մենք յեղաշրջումը կը տեսնենք ազնուացումին, բարձրացումին մէջ ինչ որ օրիմուռ է և տիպար հայկական : Եթէ յեղափոխութիւնը ժողովուրդի երիկամունքէն պէտք է բղխի, աւելորդ իսկ է հոն յիշեցնել թէ, եթէ Հայերս տասը դար ալ ապրէինք յառաջդիմական վարչութեան մը տակ արդիւնքը ընկերվարականութենէ տարբեր բան մը պիտի ըլլար :

Առանց աւելի առաջ երթալու մեր տրամաբանելու իրաւունքին մէջ ազատ թողլով յեղափոխական ներկայ կուսակցութիւնները իրենց դաւանանքներուն մէջ, նկատելով զանոնք ազգին արմատական կամ ընկերվարական մասը, ունենալով իրենց իր իտէալ իրենց հեռանոր քաղաքական կամ տնտեսական ձգտումները, ևս անհրաժեշտ կը նկատեմ լուրջ, առողջ և զօրաւոր

պահպանողականութեան մը գոյութիւնը :

Արթուն՝ ժողովրդին իրաւունքներուն վրայ հսկող պահպանողականութիւն մը միայն պիտի կրնայ մեր ազատական անուանած յեղափոխական մասը որոշ ուղղութեան մէջ դնել և զանոնք թիւադրել դէպի գործունէութիւն, դէպի ազատագրութեան բարձր իտէալը :

Ազգին պահպանողականութիւնը մէկ կողմէն իբր տեղային իրաւանց և գոյութեան ախտիւն պիտի քաջալերէ և իր տրամադրելի ուժերը միացնէ ազատականներու, միւս կողմէն տիպար-հայկական ցեղային նկարագիրը կազմէ հիմնունդով պատմութեան և աւանդութիւններու վրայ :

Առողջ պահպանողականութիւն մը միայն պիտի կրնայ օտար հողի վրայ գտնուող հայ գաղթականութիւնը փրկիլ անխուսափելի կորուստէ :

Ուժով երկաթէ ձեռք մը պէտք է ցեղին կենսական ուժը կաղժող երիտասարդութիւնը խելու համար սրճարաններու և գինեւանդանոցներու ապականած մթնոլորտէն : Ասիկայ հայ-պահպանողականութիւնը պիտի ըլլայ :

Ես անօգուտ կը նկատեմ ծրագիր մը կամ յատկապէս մը պարզելի հոս : Բայց որով նա պէտք է հիմնուի այն տեսակ պայմաններու վրայ որոնք ճշմարիտ արտայայտութիւնը ըլլան գաղթականութեան տնտեսական և մտաւորական վիճակին :

Քոնսթանցաղի բնիկ կուզեն թէ մինչեւ ցարդ այդ մասին գործուած անկանոնութիւնք իրենց և կեղեցւոյ ու վարժարանի հասոյթները խանգարած և հետեւաբար իրենց ազգօգուտ ծրագիրներուն գործագրութեան մասամբ արգելք եղած են :

Իսկապէս փափաքելի է որ վերջ մը տրուի այս ու այն քաղաքի քահանաներուն իրենց թեմէն դուրս երթեակութիւն ընելուն, քաղաքաձիններու նման, որ իրարու ձեռքէ հաց խլելէ զատ ուրիշ բան չը նշանակէր, որով եկեղեցիներն ալ մասամբ հասոյթէ կը զրկուին :

Արդէն այս մասին անցեալ տարի Պատրիարքարանը շրջաբերական մը զրկած և արգիլած էր քահանաներուն իրենց պաշտօնավարած թեմէն դուրս ելնել քահանայագործութեան համար, առանց հոսիւր իշխանութեան թոյլտուութեանը :

Բայց որով կըսես : մեր քահանաները շրջուն վաճառականներ են դարձեր : Իսկ թագ. խորհուրդները ինքզինքնին անձեռնհաս կը զգան անոնց շահագիտական ճամբորդութիւնները արգելելու, որովհետեւ տէր պապան «չեմ ապրիր կոր, չէ նէ ինձ ապրեցուցէք» կը պողայ թաղականին երեսին :

Մենք կը կարծենք թէ այս անկանոնութիւնները և ուրիշ շատ մը ապօրինութիւններ չը պիտի փաղարին մինչեւ որ Ռուսական և Պոլսկարի Հայերը իրենց Առաջնորդները ունենան :

«ԲԱԶԱՐՃԻ» ՔԱՀԱՆԱՆԵՐ

Քոնսթանցաղի թագ. խորհուրդը կոչ մը ուղղած է Պոլսկարիոյ և Ռուսական մէկ քանի քաղաքացի թագ. խորհուրդներուն, խնդրելով որ չը թողաքրուի ուրիշ քաղաքներու քահանաներուն որ քոնսթանցաղի թեմ ճանչցուած Մէճիտիէ, Չէշնափօտա, Օսդրով և Մանկալիա քաղաքներուն կամ ասոնց գիւղերուն մէջ բնակող ազգայնոց հոգեւոր պէտքերը մատակարարելու երթան :

ԹՂԹԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍԱԼՄԱՍՏ, 18 Յունիս

Սահմանազլխի քիւրդ աւազակաբարոյ ցեղերի դրացիութիւնը մի մեծ չարիք է Սալմաստի բնակչութեան համար : Ճարայի, Սոմայի և Խանասորի շրջաններու որչափ քրդական Շիկակ, Մամադի, Մարգիկցի և այլ ցեղերը օգտուելով Սալմաստի անպաշտպան դրութիւնից պարբերաբար տարին մի քանի անգամ յարձակուելով ա :

ւերում են և թալանում մօտակայ գիւղերը: Այդ յարձակումները շատ սուղ են նստում Սալմաստի բնակչութեանը տնտեսական կատարեալ քայքայում առաջ բերելով: Այդպէս՝ անցեալ տարի քրդերը (գլխաւորապէս տաճկահպատակներ), յարձակուելով 15-ի չափ պարսկաբնակ գիւղերի վրայ, 20,000 թուամանի արժողութեամբ աւար տարին: Բացի այդ աւարը, որի հետեւանքը շատ ծանր եղաւ Սալմաստի աղքատ բնակչութեան համար, յարձակումների ժամանակ իրենց գոյքը պաշտպանելիս գիւղացիները մօտ 20-ի չափ մարդիկ զոհ տուեցին իրենցից տարած աւարը քրդերից յետ խլելու համար: Կառավարութեան արած փորձերն ապարդիւն անցան, նոյն իսկ զօրքերի և քրդերի միջև տեղի ունեցած ընդհարումների ժամանակ մի քանի պարսիկ զինուորներ սպանուեցին:

Ինչպէս երեւում է, կառավարութիւնն այս տարի որոշել է արմատական միջոցների դիմել քրդերին զսպելու և նրանց աւաղակութիւններին վերջ տալու համար: Մօտ մի ամիս է, որ կառավարութիւնն ամենայն եռանդով զօրք է կեդրոնացնում Սալմաստում մինչև այժմ աւելի քան 3000 զօրք կայ համախմբուած այստեղ, որոնք լեռնային 2 թնդանթներով և մի քանի ֆալկանտներով բանակ են գրած գաւառի կեդրոնում գտնուող Դրիշկ գիւղի «չիմաններում»: Զինուորների թիւն օրէ ցօր ստուարանում է: Ինչպէս ասում են, բոլոր զօրքերի թիւը 6000-ի պիտի հասնի: Երկու չարաթ առաջ խոյից այստեղ եկաւ խոյ-Սալմաստի նորնա հանգապետ Շահզադէ Մանուշար-Միրզան և ստանձնեց բանակի հրամանատարի պաշտօնը: Տեսնենք

թէ ինչ արդիւնք կունենան կառավարութեան այդ բարի ջանքերը:

Սալմաստցիների ներկայ լքեալ ու յուսահատ դրութիւնը, նրանց վերջին տարիների ընթացքում կրած տանջանքները, հարստահարութիւններն ու բռնութիւններն ստիպում են նրանց փոկութեան մի ելք գտնել, և իրենց փոկութիւնն այսօր սալմաստից հայր գաղթու: Կանութեան մէջ է գտնուում իւրաքանչիւր տարի տասնեակ ընտանիքներ իրենց կեանքն ու կալքն ազատելու համար կեղծքիչ ձեռք բից, գաղթում են դէպի Կովկաս, Թուրքի, Ուրմի և այլ համեմատաբար ապահով վայրեր:

ՀՐԱՅՐ
(Նոր Դար)

ՅԱՆՅԱՆՔԸ ՈՐՈՒՆ Է

Ա.

ԽԱՉԱԳՈՂԻ ԱՆՑԵԱԼԸ

(Շար. Ասիայի քիւն)

Նախ մենք պիտի ստիպուինք քաղել անոր (Վարդօ) անցեալին այն մասերը զորս ինքը իր ձեռքով եւ ստորագրութեամբ գրած եւ հրապարակ հանած է՝ խոշոր սուտերով շինծու իր ամենախայտառակ երկուսն աւանդելով: Եւ ամենաձաղրելի Վարդ Պասրիկովի յիշատակաւորում: Այս կերպով ինքը «ըսի ըսաւ» եւ փախուստի միջոց չը պիտի ունենայ: Մենք յարմար կը տեսնենք քանի մը խօսք ըսելու հոս (թէն զէպքերու կարգէն չեղած պիտի ըլլանք, բայց ստիպուած ենք այսպէս ընելու): Շարժում թերթի հիմնուելու եւ Յիշատակարանի հրատարակութեան մասին: Վարդօն Պալքանեան ներկայացու-

ցիչ եղած միջոցին Վառնայի Հայ. Յեղ. Դաշնակցութեան գումարի մասունքն էր յայտնի 1,200 ֆրանք կորցել առանց Դրոշակի խմբագրութեան կամ պիւնտի իմացելու: Այդ գումարով կը հիմնէ Շարժում թերթը եւ կը հրատարակէ Պ. Գալեր-Արշաւիրի եւ Երուանդ Սրմաքչիանի խմբագրութեամբ: Բայց թերթին խմբագրապետ եւ տնօրէն ինքը կը լլայ գաղտնի կերպով: Շարժում հիմնուելու բուն նպատակն կը լլայ իր Յիշատակարանը հրատարակել իր հերոսութիւնները թուել բարձր պատուի մը (ֆ.ֆ.) հասնիլ, բայց ընդհակառակը, այդ Յիշատակարանի հրատարակութեամբ ինքը իր արժանի տեղը գտաւ, եւ շատեր կը յիշեն թէ այդ խայտառակ յիշատակարանը ինչ վատ տպագրութիւն թողուց ժողովուրդին վրայ եւ ինչպէս Վարդօն մերկացաւ եւ իր իսկական գոյնով փառաւորուեցաւ... աւագ...: Շարժումի առաջին տարուան առաջին թուոյն մէջ հրատարակուած է սոյն յայտարարութիւնը:

Յիշատարակ Վարդ-Պասրիկովի

«Արտասահման բնակող բարեկամ մը, որ Վարդ-Պասրիկովի դպրոցապետն էր եղած է եւ անոր մտերմութիւնը վայելած, վերջերս մեզ «կիմացնէ թէ իր մօտ ունի նշանաւոր հայ Յեղափոխական ինքնագիր յիշատակարանը եւ տրամադիր է մեզ շարժումը զայն Շարժումի մէջ հրատարակուելու համար: Աւելորդ է յարել «թէ խմբագրութիւնն որքան հրճուած «քով փութացաւ հաւանիլ այս յիշատակարանի հրատարակութեան որ պիտի «պարզէ ոչ միայն նշանաւոր եւ փոքր «թորկալից կեանքի մը գերազանց «ցապէս շահագրգիռ պարագաները, «այլ եւ թերեւս մինչեւ հիմայ մութի մէջ թաղուած շատ մը կէտեր պիտի «լուսաբանէ: «Շարժումի մօտաւորագոյն թիւերէն «միոյն մէջ պիտի սկսինք այս հրատարակութեան որ ապահով ենք թէ չառաքանակ հեղուք եւ վատ հետաքրքրութեան մը ջերմութեան մէջ պիտի «պահէ մեր ընթերցողները»:

Ահա չինծու յայտարարութիւնն մը որ իբր թէ Վարդօն իր ընկերին

յանձնած է իր յիշատակարանը: Այս է Վարդօն Շարժում հրատարակուել սկսելէն վերջ օրը օրին գրած է իր յիշատակարանը եւ հրատարակած է: 1898 Ապրիլ 25էն մինչ Թուրքի վերջեր Շարժումի մէջ ընդհատուած է Յիշատակարանի հրատարակութիւնը, որովհետեւ այդ օրերը Վարդօն թիֆլիս կը գտնուէր եւ կը մասնակցէր Դաշնակցութեան Ընդհ. Ժողովին: Օրը օրին իր ձեռքով գրելուն ու հրատարակելուն վկայներ ալ կան:

Վարդօյի պատանեկութեան միջոցին գտնուած է մ.կը որ բարեսրտութիւնն ունեցած է զինքը դպրոց մը դրկելու: Տարիներ յետոյ յաջողած է ձեռնարանի սեմէն ներս ընդունուելու: Դիւ ատենէն գաղտնիքն երեւան կենէ, զինքը իբր անտառ... գիշերանց իր անկողինէն կը հանին եւ ձեռնարանէն կը վճռեն: (*)

ձեռնարանէն վճռուելէն եւ ժամանակ մը թափառելէն վերջ իբր թէ Ռուսաց մէկ դպրոցն կը մանէ: չենք գիտեր թէ այդ դպրոցէն ալ ինչ պարագաներու տակ զորս եղած է. արդէն ձեռնարանէն վճռուած մը ինչ կրնայ ըլլալ: Անկից վերջ կը սկսի աղիլիկներու հետ սիրահարական յրաշխանքն ընել:

Ինչպէս կերելու անթի մնալը զգալի եղած է իրեն, քանի որ խելահաս եղած է. բազմախնդրութիւնը բուն կը գնէ իր սրտին մէջ, որով կորոշէ Յեղափոխական ասպարէզ մտնել գոնէ անթի չը մնալու համար եւ այլ առթիւ իր շահատակութիւնները սկսիլ «Յեղափոխական» անուան տակ. եւ անա ասկից կը սկսի իր յաղորդակցութեան թուականը:

Կը թափառի ու կը թափառի, չէ՞ որ կուզէ իր չար որոշումն գործադրել ստանակներու եւ լոթիներու նման կը յաջողի իր նմաններէն մէկ երկուք գտնել: Բայց մը որ շատ պտուար չէր: Յանկարծ Արմենիս լրագիր մը ձեռք կանցունէ եւ չափազանց կուրախա-

(*) ձեռնարանէն վճռուելու պարագան ինք իր գրչին տակ խոստովանած է:

Մ. Յ.

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

(5)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՐՎԻՇ...

Լուծֆի աղայի եւ տէրվիլի խօսակցութիւնը յանկարծ ընդհատուեցաւ, երբ Զէքի ներս մտաւ եւ իմացուց թէ պառաւ կին մը կար պարսպին դուռը, որ կուզէր տեսնել զինքը:

— Պառաւ կին մը... մընջեց Լուծֆի աղայ: Ո՞վ է... ի՞նչ կուզէ...

— Ո՞վ ով ըլլալը յայտնեց, ո՞չ ալ ինչ ուզել... նկատել տուաւ Զէքի յարգական ձայնով մը: «Ես միայն պէտքի պիտի ըսեմ» կը պնդէ ու կուլայ:

— Ի՞նչ ազգ է:
— Զրսեր, տէ՛ր իմ:
— Խիստ լաւ, գնա՛ հոս բեր զինքը: Զէքի մեկնեցաւ:

Գիշ յետոյ յիսունն անցած, միջահասակ, արեւախաւ կերպարանքով, միւր հալած կազմուածքով, ծովէն դուրս հանուած մահամերձ մարդու մը գիմա-

գծերով, համակերպի ու բաւական գեղանի կին մը ներս մտաւ:

Յայտնի կերեւար որ այդ կինը բնիկներէն չէր: Մանաւանդ, հագուստը բոլորովին եւրոպական ըլլալով, աչքի կը զարնէր անոր հետեւ երկրէ մը գալը:

Ազնուական կինը յարգալից շարժումներով մը մօտեցաւ Լուծֆի աղային ու անոր ձեռքը թոթվեց. իսկ տէրվիլին դառնալով՝ գլխի խոնարհում մը ըրաւ:

— Հաճեցէ՛ք նստելու, Տիկին, ըսաւ Լուծֆի աղա՝ որ խորին հետաքրքրութեամբ մը անոր արտասուածքը աչքերու մէջ նայեցաւ:

— Շնորհակալ եմ, պարոն թիարանապետ, մընջեց համակերպի կինը՝ սիրտը ելած ձայնով մը: Ո՞հ, ներողութիւն կը խնդրեմ որ այսքան ձանձրոյթ պատճառից ձեզ: Գիտեմ թէ մեծ բարիք մը ըրիք ինձի՝ այս բերդէն ներս մտնելով: Յաւիտեան չի պիտի մոռնամ զայն:

Բայց չկրցաւ շարունակել... չկրցաւ ամեն բան յայտնել: Հողին ցաւած մանուկի մը պէս՝ արցունքը լեցուեցաւ աչքերուն մէջ... հեծկտանքը ուռեցուց կուրծքը... ու սկսաւ լալ:

Լուծֆի աղա յուզուած էր:

Գալով տէրվիլին, ապուշ ապուշ կը նայէր: — Արդեօք ինչ բանի համար մինչեւ հոս պարտաւորուեցաք զալ, տիկին, հարցուց Լուծֆի աղա խղճուած ձայնով մը:

— Ո՞հ, պարոն թիարանապետ, վերն Աստուած ու վարը՝ ձեզ աղերսելու եկած եմ հոս, պատասխանեց թշուառ կինը: Կը հաւատամ թէ բարի էք

գոչք ու իմ վիճակիս վրայ պիտի գթաք: Կը հաւատամ թէ կնոջ մը սիրտը կը ճանչնաք, եւ գիտէք թէ անկա տկար արարածն է աշխարհքիս մէջ: Հետեւաբար պիտի խնդրէի որ գոնէ ժամի մը չափ որդուս քովը երթալու հրաման մը տայիք ինձի, որ ասան երկու տարիէ ի վեր հոս կը գտնուի... այս թիարանին մէջ կը տառապի:

Լուծֆի աղայի մազերը փուշ փուշ եղան ու հոգին անզուսպ դառնութեամբ մը լեցուեցաւ: Մէկէն ի մէկ չկրցաւ խօսիլ... կարծես թէ լեզուն քիմքերուն զարնուած մնաց:

— Տարիներ, ա՛խ, տարիներ անցան ա՛յն օրէն ի վեր, պարոն թիարանապետ, շարունակեց խղճ կինը... ու ես փուռ տեղ երկրէ երկիր, աշխարհքէ աշխարհք, վերջապէս ամեն ուրեք թափառեցայ զինքը գտնելու համար, որ ամբողջ յոյսս է, ամբողջ կեանքս է: Մայրական սիրտը՝ քայլերուս ուժ տուաւ, արիւնթիւն տուաւ... հետեւաբար աչքիս չեղեցաւ մարդկային ցեղերու վարքերու թիւնը: Բանտերէն ինչուսկալի աքսորւալս, ինչուսկալի թիարանը վազեցի... ստորագասեալ պաշտօնեայէ մը ինչուսկալի պետը գիմեցի... ամեն կերպով ինքզինքս վտանգներու, արկածներու ու չարագոյն աղետներու ենթարկեցի... Այս բոլորը սիրով յանձն առի ու երբէ՛ք չզգեցաւ ինչուսկալի: Երբ աչքերս ցուրտ հողին տակ պիտի փակուին: Հիմակ, ո՞վ բարի Աստուած, հոս եկայ... որովհետեւ «որդիս այս թիարանին մէջ է» ըսին ինձի: — Եթէ տեսնէք ձեր զաւակը, տիկին, նկատել

նայ, ալ վստահ ըլլալով թէ հրապարակ նետուելու եւ իր անշահ կաշին քարշ տալու միջոցն ձեռք անցուց: Իսկոյն նամակ մը կը գրէ Տ. Մկրտիչ Փողթուզալեանի, իսկ Տ. Մկրտիչ Փողթուզալեան ժխտողական պատասխան կուտայ. բոլորովին յուսախար կըլլայ, եւ այդ թուականէն կը սկսի իր հակառակութիւնը Տ. Փողթուզալեանի դէմ: Բայց Տ. Փողթուզալեան այսօր չատ ուրախ է որ այսպիսի բաղդարները մը հրապարակ նետուելու պատճառ եղած չէ:

Այս յուսախարութեան վրայ նորէն կը թափառի եւ օր մը Պաթումի մէջ կը գտնէ Հայաստան լրագրի գործակալը, կը կարծէ թէ այլեւս չը յաջողու երկու կողմերէն չկան, կը ներկայանայ Տ. Ճ. ի եւ իր որդուին կը յայտնէ. եւ որովհետեւ Տ. Ճ. պէտք էր գրէր Պօլիս Տ. Յարութեան Չաքրեանին, նամակ կը գրուի եւ ինչպէս կ'երևի Տ. Չաքրեան իր հետադարձութեամբ մէջ ընդունիլ: Այժմ պարզ կերեւի որ այդ օրէն կը սկսի իր հակառակութիւնն այդ վաղեմի եւ տառապիտ: Գործիչ Տ. Յ. Չաքրեանի դէմ. հակառակութիւն որ տեսնեց մինչեւ գերեզմանէն անդին. Վարդօր այդ ընթացքը կատարեալ լրջութիւն է...

3. Կ. ՃԱՆԿԻԼԵԱՆ
(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պոլսոյ Մանգուսէ եւ Սոքրման. դակ հայաթերթերը վերջերս դադարման դատապարտուած էին. բայց հինգշաբթի օրէ ի վեր տպագրական տեսչութեան կողմէ արտօնուած են հրատարակուիլ:

— Եգիպտոսի Առաջնորդը քուրէլային վրայ տեղեկագիր մը զրրկած է, որով կը յայտնէ թէ այդ հիւանդութիւնը աւելի ճարակած է տեղւոյն ֆէլլահներուն մէջ, եւ

տեղւոյն կառավարութեան ձեռք առած միջոցներուն շնորհիւ այժմ հիւանդութիւնը մեղմացած է:

— Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութեան պատուիրակ Տ. Մովսէս Եպս. Կէօմրի քանան անցեալ չորեքշաբթի առաւօտ Մէրսին հասեր է:

— Երուսաղէմի Ժողովուրդային վարժարանն այս տարի ութ շրջանաւարտ ունեցած է. Յաւայթիկայ տարեշրջանին համար նոր աշակերտներ պիտի չընդունուին:

— Պապուէ կը գրեն թէ Յուլիս 26ին մեռած է Յովսէփ Թումանիան մեծահարուստ ազգային: Հիւանդացիոյն օրդին Տ. Գերասիմ Թումանիան, կրօնական մը առաջարկութեան վրայ, ի յիշատակ իր հօր, նորիւրմ է 10,000 րուպի Պարսկա-Հիւստանի թիւի առաջնորդարանին յատուկ տպարան մը հաստատուելու համար: Կը յուսանք թէ այդ տպարանի շնորհիւ Պարսկահայք եւս իրենց պարբերական թերթը ունենան:

— Երկրաշարժէ կործանած Շամախ քաղաքին վերաշինութեան յատկագիծը պարտաստուած է. կառավարութիւնը ազգատնիկներու գումարներ նպաստ կը բաժնէ փայտեայ բնակարաններ կառուցանելու համար բարձր գիրք ունեցող տեղերու վրայ:

— Պարսկաստանէ ահագին քանակութեամբ գորգ գնող Անգլիական ընկերութիւն մը կողմասի մէջ ալ մասնաճիւղ մը հաստատած է, եւ հին ու թանկագին կողկասեան գորգերը կրկին պատրաստել տալու նպատակաւ վարպետներ, քիմիագէտներ, ներկարարներ ու նկարիչներ տարած է հոն:

Կը կարծուի թէ այդ նոր հաստատութիւնէն տուեւելապէս տեղ-

ւոյն Հայերը պիտի օգտուին:

— Ամերիկայէ մեզ կը գրեն թէ խարբերդի Պըշմէն գիւղէն Սիւրովրէ Ամաճանեան անունով մէկը հայրենիքի մէջ կին եւ 11 տարեկան զաւակ մը ունենալով հանգերձ՝ Ամերիկայի մէջ ամուսնացած է 14 տարեկան հայ աղջկան մը հետ: Աղջկան հայրը այս կրկնամուսնութեան հակառակած ու տեղական դատարանին դիմած է. Ամերիկեան կառավարութիւնը այդ օրինազանց հայուն ձեռքէն առած է աղջիկը. Օգոստոս 18ին դատը պիտի տեսնուի Ֆիշպուրկի մէջ:

— Քաղաքիս Ազգ. վարժարանաց Հոգաբարձութեան ընտրութիւնը այս կիրակի օր տեղի ունեցաւ ըստ սովորութեան քաղաքապետական ժողովոյ ընտրութեան հետ:

Նոր Հոգաբարձուներն են՝
Տիարք
Թափուր Թօսպըլըգեան
Մ. Կարապետ Գէորգեան
Թովակիմ Մ. Թովմասեան
Փիլիպպոս Հալաճեան
Գալուստ Աւագեան
Այս նորընտիր Հոգաբարձուներուն կար եւ աշխատասիրութիւն կը մաղթենք:

— ԿՈՒՋՈՒԻ. — Մի ուսուցիչ Սիլիստրէի արական նախակրթարանին համար, շրջանաւարտ եւ վկայեալ աղջկային գիմնազիայէ մը. եւ մի վարժ, քաղցրաձայն, պատուաւոր երաժիշտ նոյն տեղի եկեղեցւոյն համար:

Համաձայնութեան համար գիմն. Հայոց Դպրոցական Հոգաբարձութեան Սիլիստրէի:

Հոգաբարձութիւն

ԻՐԱՆԻՈՒՆՔԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Տ. Մ. Գալուստ, Վոսարոն (Ամերիկա). — Երեք շաբաթ միայն թերթիս հրատարակութիւնը ընդհատած էինք. բայց անկէ ասդին, գրեթէ երկու ամիսէ ի վեր, շարունակ կը զրկենք ձեր թերթերը, ինչպէս բոլոր մեր բաժանորդներուն:

Մեզմէ ուզուած գրքերուն եւ թերթերուն փոխարէնը պէտք է կանխիկ զրկել: Ուստի կը սպասենք:

— Տ. Մ. Խաչատուր, Սիլիկե. — Իւրաքանչիւր թիւին համար 15ական սանդիւմ պէտք է զրկէք:

— Մուշեղ Ղազարեանը փնտռողը մեզ գիտելու է:

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

ՆՈՐ ԵՐԴԱՐԱՆ ԿԱՄ ՄՐՄՈՒՋ ՀԱՅ-ԿԱԿԱՆ: Այս երգարանը Բ. անգամ տպագրուելով աւելի ճոխացած ու բարեփոխուած է, եւ հակառակ գնոյն աժանութեանը կը պարունակէ ազգային հին եւ նոր խիստ շատ երգեր: Գին 1 Ֆր.

ՆԷՏԱ ԿԱՄ ՄՐՄՈՒՍ ՊԱՏԱՍԽԱՆ, Պուլկարիոյ ազատութենէն առաջ Պուլկար գիւղացիին Թուրքերէ կըրած տառապանքները ու անոնց նիստ ու կացը կը պատկերացնէ: Շատ հետաքրքրական: Գին 50 ՍԱՆԻՐ.

ՀԱՅԹԵՆԻՔԻ ԶՈՂՆԵՐ. Պատկեր մը Տաճկահայաստանի իրական կեանքէն, գրեց Ղ. Նահապետեան: Զեղչեալ Գին 1 Ֆր.

Այս գիրքերը ստանալու համար պէտք է գիմն. Իրաւունքի խմբագրութեան, բոսթի ծախքը 10ական սանդիւմ միատեղ զրկելով. իսկ գիրքերու արժեքին համար, եթէ ուրիշ գիրքութիւններ պակսին, կընդունուի նամակագրօջմ 10 0/0 զեղչով:

տուաւ Լուծֆի աղա, պիտի ճանչէ՞ք:

— Ո՛հ, եթէ փոխուած ըլլայ, գոնէ՛ արիւնս պիտի զարնէ սրտիս մէջ, պարոն թիարանապետ:

— Շատ լաւ, տիկին, չպիտի մերժեմ: Եթէ զաւակդ այստեղ է, կարող էք պնտր տեսութիւնը վայելիլ:

— Անհունապէս երախտապարտ եմ, պարոն թիարանապետ:

Լուծֆի աղա դէպի տէրվիլը դառնալով,
— Անշուշտ ժամի մը չափ պիտի ուզես սպասել մեզի տէրվիլն, ըսաւ զառնութեամբ մը:

— Հոգ չէ՛, պէ՛յս, վաղը կրնանք տեսնուիլ, վրայ բերաւ տէրվիլը: Հիմակ կերթամ ես:

— Գու կամբք... մրմնջեց Լուծֆի աղա:

Տէրվիլը խորին վշտի մը ներքեւ՝ դուրս ելաւ պաշտօնատունէն:

Լուծֆի աղա եւ տիկինը նոյնպէս դուրս ելան պաշտօնատունէն եւ ուղղակի աշխատութեան վայրը գիմնեցին:

Կէս օրուան մօտ էր:

Կալանաւորները խումբ խումբ նստած էին ապառաժներու ներքեւ:

Երբ Լուծֆի աղայի երեւումը նշմարուեցաւ, անմիջապէս ոտքի ելան ու՝ ստրկական ամենէն աւանարգ ձեւի մը տակ՝ բարեւի կեցան:

Տիկինը մոլորացած նայուածքով մը իր աչքը կը պտտուէր ամենուն վրայ:

Ո՛հ, ո՛հ... իր մայրական չքնաղ սիրտը չէր զարնէր: Այդ բոլոր թշուառներու մէջ իր հոգւոյն հետ կապ ունեցող մէկը չկար:

— Ամենը ա՛յս է, պարոն թիարանապետ, հար-

ցուց տիկինը յուսահատական ձայնով մը:

— Ուրիշ թիարանապետներ չունինք, տիկին:

— Ո՛հ, ուրիշն սխալ տեղեկութիւններ տուած են ինձի, պարոն թիարանապետ: Այս լքեալներու մէջ զաւակս չեմ տեսներ:

Լուծֆի աղա յանկարծ յիշեց թէ թիարանին գնտաններէն մէկուն մէջ երիտասարդ մը կար, որ կատաղի ոճրագործ մըն էր:

— Կը խնդրեմ, տիկին, ըսէ՛ք ինձի թէ՛ ի՞նչ աղդի կը պատկանիք դուք, հարցուց Լուծֆի աղա:

— Հայ կին մըն եմ, պարոն թիարանապետ:

— Հայ...
— Այո՛:

— Քանի որ այդպէս է, երթա՛նք թիարանին գնտանը: Հոնտեղ կալանաւորներ ունինք, որոնք դատապարտուած են արեւու երեսը չտեսնելու: Գուցէ՛... ի՞նչ ըսեմ... դուցէ՛ հոն պիտի գտնէք ձեր զաւակը:

— Երթա՛նք, պարոն թիարանապետ, երթա՛նք... մրմնջեց կինը:

Ու երկուքն ալ՝ ապառաժներէն վեր, դէպի բերդին ա՛յն մասին մէջ յառաջացան, ուր կը գտնուէր գնտանը:

ՄԱՅՐ ԵՒ ՈՐԳԻ

Լուծֆի աղա եւ անձանթ կինը նախապէս թիարաններու յատկացուած շէնքը մտան, ուսկից

նեղ անցք մը կար դէպի գնտանը տանող:

— Ասիկա թիարանապետն է, բնակարանն է, տիկին, ըսաւ Լուծֆի աղա: Երբ իրեկուն ըլլայ, աշխատութիւնէն վերադառնալով՝ հոս կը պառկին: Կը տեսնէ՞ք իրենց անկողինները: Պարզ խոտէ շինուած են: Անշուշտ ապրիլ մը չէ ասիկա... կեանք մը չէ ասիկա... բայց ի՞նչ ընես, կառավարութիւնը պարտաւորուած է...

Ազնուական կինը նայեցաւ... նայեցաւ այդ ջուլնեքու մէջ լեցուած խոտէ անկողիններու վրայ, բարձերու վրայ, մանաւանդ՝ քրտինքի ու գարշութեանց մէջ կաշի կտրած վերմակներու վրայ...

— Ո՛հ, իրաւ է որ աղետայի է այս տեսարանը, պարոն թիարանապետ, մրմնջեց կինը ջախջախուած ձայնով մը:

Ու սրտին դառնութիւնէն ճնշուած՝ չկրցաւ արցունքները զսպել որոնք մարգարտի փաղփաղուն շիթերու պէս անոր մեղմաձղիկ թայց աղւոր այտերու վրայէն սկսան թափուիլ...

Լուծֆի աղա նշմարեց:

Կնոջ մը այդ հոգեկան դառնութիւնը փղձկեցուց զինքը:

Ու ապամայ՝ հառաջանք մը քաշեց:

(Շարունակելի)

Ապօնէիւնէրմիզին պիտ թէ-
խիւր կազէթա պէտէլինի կէօնտէրմէ-
լէրի բէճա օլունուր :

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԵԳԻՅԷ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Լիբանանա բրէնս նապ իթմէք
իչիւն թիւրք հիւքիւմէթի վէ էլ-
չիւր պէյնիտէ էլան իթիւաֆ
հասըլ օլումատը : Գէզա Սուլթան
տախի պիւր պաշգա պօլ չէքիօր :
Պապը Ալի Գոհհանէս պէյի (Բօ.
մօտաքի օսմանը սէֆարէթի սէր
քեաթիպի) վէ Երամ էֆէնտի
գանտիտա կէօսթէրմիլ իքէն , պուն-
լարըն Էրմէնի օլմալարը սէպէպլէ
Սուլթան րազի օլմամըլ տըր : Տի-
կէր պիւր թագըմարը տախի էլչի-
լէրտէն գապու օլընմատըլար : Նի-
հայէթ Պապը Ալի քիմի կէօսթէ-
րէճէկինի շաշըրմըլ օլուպ , էլչիլէր
իլէ պիւր միւղէքէրէ իթմէք իչիւն
անլէրի սէտարէթէ տապէթ իթմէք
նիլէթինտէ իքէն , Սուլթան օմէ-
սէլէ իչիւն էլչիլէրին Պապը Ալիյէ
թօրլանմասընա միւսատէ իթմէմիլ
տիւր : Պու սէպէպլէ խարիճիյէն
զըրը էլչիլէրին Աւստրիա սէֆա-
րէթհանէսինէ թէճէմիւ օլընմալա-
րընը թէքլիֆ իթմիլ տիւր :

— Թիւրքիանըն պիւր մահէլին-
տէն տիկէր պիւր մահէլէ նազլ օլը
նան մալլէր իչիւն 100 տէ 2 կէօմ.
րիւք ալընմասընա գարըլ էլչիլէր
միւթթէֆիգ պիւր նօթա իլէ Պապը
Ալիյէ բրօթէսթ իթմիլլէր տիւր :

— Պու ալըն 19ընա միւսատըֆ
Սուլթան Համիտին ճիւլիսի միւ-
նասիպէթլէ իճրա օլընմադ գիյ-
նէթ վէ տօնանմալար մէսարիֆաթը
իչիւն՝ ժալիյէ նազըրը Պանգ Օթօ.
մանտան էօտիւնճ ազճէ ալմայա
շալըլըլօր :

— Կէչէնլէրտէ Սատրաղամ Սա-
րիտ բաշանըն ըրյասէթի ալթընտա
նազըրլարտան միւթէչէքիլ գօմի-
սիօնըն Մաքէթոնիա իչիւն գալէմէ
ալմըլ օլտըլը իսլահ-թէ ճէտլէլինի
իճրա իթմէք իչիւն Սուլթան Է.
նի պիւր իրատէ իլէ՝ նէպարէթլէրին
էհէմիլլէթլի մէմուրլարընտան պէօ-
րիւք պիւր գօմիսիօն թէչէքիլ օլըն-
մասընը վէ պու գօմիսիօնըն Մա-
քէթոնիայա կիթմէսինի էմր իթ-
միլ տիւր :

— Պապը Ալի Լիբանան իչիւն
նիհայէթ Տանիլ էֆէնտի (Գօսսիվա
վալիսինին մուապինի) գանտիտա
կէօսթէրմիլ օլուպ , էլչիլէր սօն
իճթիմատա՝ պու զաթ իւզէրինէ
մալիւմաթ ալմադ իչիւն՝ Օգոս. 28է
գատար շիմտիքի Լիբանան բրէն-
սինին մէմուրիլլէթէ տէվամ իթմէ-
սինէ գարար վէրտիլէր :

— Սօն հափատիսէ պինտէն ,
Պապը Ալի Պանգ Օթօմանտան
50,000 լիւրա Էէնի պիւր իսթիգրազ
ալմատըլը սէպէպլէ , պաշգա-

պիւր Էէրտէն բարա նպուլմազ գալ-
րէթինտէ իմիլ :

ՏԱԽԻԼԻՑԷ

Պու բազար կիւնիւ շէհրիմիզին
պէլէտիյէ մէճիս ազալարընըն վէ
մէթթէպ հօգարարձուլարըն ինթի-
խապաթը իճրա օլընտը :

Պէշ Էրիզ սէս էքսէրիլլէթլէ հիւ-
քիւմէթ գանտիտալարը գազանտը-
լար :

Ս. Բանույօթ Գըրճիէվին բէյիս
նապ օլընմադը մուգարըք տիւր :
Սիլլէթտաշարըմըլ թարաֆըն-
տան տախի Գոփալիմ Հոճի թիւվ-
մասնան ալա ինթիխապ օլընմըլ
տըլ :

— Պունտան պիւր այ մուգատ-
տէմ իթիմարէթ իչիւն Բուժանիայա
կէչմիլ օլան իւլ կէնճ միլլէթտաշ-
լարըմըլ՝ բասաթթիլարը օլմա-
տըլը սէպէպլէ Բէօսթէնէտէն
կէրի կէօնտէրիլմիլ վէ պու կիւն
պուրայա Էթիլլէթլիլէր տիւր : Ան-
լէրին սէրպէսթ պըրազըլմալը ի
չիւն շէհրիմիլ կրատօ նաշալիկ
թարաֆընտան պիւր թագըմ միւլ-
քիւլաթ կէօսթէրիլտի , վէ նիհա-
յէթ սէրպէստիլլէթ վէրիլտի իսէ-
տէ , պու պապտէ Ս. Նաշալիկին
իթիւրազը էհէմիլլէթլէ շալան տըլ :
չէօլլէ քի՝ բօլիսիտան իլլին ալ-
մագազըն գաշազ նէվինտէն կի-
տէնլէր թուլթուլմալարընտա գա-
նուն միւլթիպինէ ճէզալանմալարը
լալըմ կէլիւր : Պու Էօլտա միւլթի-
լաթա սէպէպլէթ վէրմէմէք ի
չիւն , Վարնա պէլէտիլլէսի 1896տան
պէրու պիւր սուհուլէթ կէօսթէր-
միլ տիւր , Էանի գըրկընլար սէպէ-
պինտէն պիւր բասաթթիլ թիւր-
քիտան գաշազ տէ Պուլկարիայա
սըլընմըլ օլան՝ միլլէթտաշարը-
մըլտան հէր հանկըսը տիկէր պիւր
մէմալիլլէ՝ կիթմէք արգուսընտա
պուլընըր իսէ՝ շէհրիմիլլէ 1896
տան պէրու թէէսիս օլընմըլ օլան
Մուհամմէր Գօմիսիօնընտան պիւր
շահատէթնամէ օլմալար : իչպու շա-
հատէթնամէ իլէ պէլէտիլլէ տիկէր
պիւր թէչէքէրէ վէրիւր , պու թէչ-
քէրէ բօլիսիայա կէօսթէրիլմէսին-
տէ իսթէնիլլէն մահալէ կիթմէք ի
չիւն պիւրմիւլթիլաթ մէզուլիլլէթ
վէրիլլէր : վէ թէքըրա կէրի տէօն-
մէք լալըմ կէլտիկինտէ՝ գօլայ-
լըլլէ Պուլկարիայա գապուլ օլը-
նըր :

Պու նիլալըլ թարիլլէ հարէ-
քէթ իթմէյէնլէրէ հիւքիւմէթ գա-
շազ նազարը իլէ պազաճազ . օ
կիպիլլէրին սօնրա կէրի կէլմէլէրի
տախի միւլթիլ օլմազ տըր : Շու-
հալտէ միլլէթտաշարըմըլ նիլալմա
միւլթալըզ հարէքէթ իթմէլի վէ
Պուլկարիանըն պիւր վէրմիլ օլ-
տըլը սուհուլլէթտէն իսթիֆատէ
էլլէմէնին Էօլընը պիւրմէլի տիւր
լէր :

Պու նիլալըլ թարիլլէ հարէ-
քէթ իթմէյէնլէրէ հիւքիւմէթ գա-
շազ նազարը իլէ պազաճազ . օ
կիպիլլէրին սօնրա կէրի կէլմէլէրի
տախի միւլթիլ օլմազ տըր : Շու-
հալտէ միլլէթտաշարըմըլ նիլալմա
միւլթալըզ հարէքէթ իթմէլի վէ
Պուլկարիանըն պիւր վէրմիլ օլ-
տըլը սուհուլլէթտէն իսթիֆատէ
էլլէմէնին Էօլընը պիւրմէլի տիւր
լէր :

Բ Ո Ւ Ս Ի Ա

Կէչէն կիւն խարըվ վալիսինի

բրէնս Օպօլէնսքինին էօմրիւնէ
սուի գապթ իտէն 18 Էաշընտա
պիւր մէթթէպիլ իմիլ : Պու ճիւնա-
լէթի ինթիլա : գօմիթէօնին էմրի
իւզրէ իճրա իթտիկինի սէլլէմիլ
տիւր : Մէրգուլ գաթիլին ըլտէրի
պէօլիք պիւր հիւքիւմէթ մէմուրը
ըմըլ : Գօմիթէ պիւր պէլանմալէ
նէշը իտուպ , բրէնսի Էօլտիւրէմէ-
տիլլէրինտէն տօլայը թէէսիլլէ
պէլան իթմիլ տիւր :

ԻՆԿԻԼԹԷՐԱ

Աճէմ Շահընըն Լօնտոյա գիյա-
լէթի միւնասիպէթլէ , Գրուլ Էտ-
ուարտտան անա Դարէթիլլէ նիշա-
նընը իթտա օլընմալը Սթան-
պօլտա պէօլիք էնտիլլէ հասըլ
իթմիլ տիւր : Պու իչի՝ ինկիլիզ
տէօվլլէթի՝ Բուսիայա գարըլ
Շահը քէնտիսինէ պէնտ իթմէք
վէ Աճէմիտանտա բէնտի բօլիթի-
գատընը Էրիւրտմէք մագաթիլլէ
համլ իտէյօլլար :

Սուլթան իսէ ինկիլիզ Գրուլընա
էն պէօլիք օսմանը նիշանընը
վէրմիլ իքէն , շիմտիլլէ գատար
քէնտիսի պիւր ինկիլիզ նիշանընա
նալիլ օլմատարըլ հալտէ , Շահա
պու կիպի ֆէվզէլատէ պիւր նիշան
վէրիլմիլ օլմասընտան հիտտէթ-
լէնմիլ օլտըլը Սթանպօլտան
Թաւնա պիւրիլլիլլար :

Ա Ի Ս Տ Ր Ի Ա

Աւստրիատան բէչպէր էհալի
թէրքի վաթանլէ Ամերիկայա հիճ-
րէթ իթմէքտէ տիւրլէր . պու սէ-
պէպլէ չիֆլիք վէ ալաղիլլէրտէ իչ-
լէմէք իչիւն բէչպէր ազալմագատա
տըր : 1899-1900 սէնէսինին հիճ-
րէթ մէվսիմինտէ Աւստրօհունգա-
րիատան 114,987 քիչի կիթտի ,
Էանի իքի նէնէ սօնրա 100տէ 50
արթմըլ տըր : վէ կիւն պէ կիւն տէ
արթմազը Աւստրիա հիւքիւմէ-
թիլլի տիւլիւնտիլլար :

ԲՈՒՄԱՆԻԱ ՎԷ ԵԱՀՈՒՏԻԼԷՐ

Պէրլիլինը թալկալարքի՝ Էազ-
մըլ օլտըլը իւզրէ , Գրուլ Գարօլ
կէչէնլէրտէ Եահուտիլլէրտէն իքի
նալմատար գաթիլար հուզուրընա գա-
պու իթմիլ վէ հէր իքիսի իլէ տէ
Բուժանիատաքի Եահուտիլլէրինտէ
վալընտան պահս օլընմըլ տըր :
Պու իքի գաթտան պիւրի կալապտա
մէշհուր թիւճար Մարքօ Մէնալ
օլուպ , օլ շէհրտէ Եահուտիլլէրին
սէֆալլէթինի գրալա նազլ իթմիլ ,
վէ անլէրին հիճրէթ իթմէլլէրի
իլէ էլլէթլին միւթէզարըր օլա
ճագընը տախի իլազ էլլէմիլ տիւր :
Գրալ մէրգուլ թիւճարըն սէօվլէրի
հազըլ պուլուպ , Եահուտիլլէրի
հիճրէթտէն ֆէրաղէթ իթտիլմէք
իչիւն էլինտէն կէլլէնի իճրա իթ-
մէսինի Ս. Մէնալտան բէճա իթ-
միլ տիւր (.) :

Քէզա Լօնտոյա խախապաշըսը
Տօթթ. կատըրը՝ էն տըր Բուժա-
նիալը օլուպ , 15 սէնէ կվլէ սիւ-

րիւրմիլ իտի , պու տէֆա գրալ-
տան հիւսնի գապուլ պուլարազ ,
միւլապաթտա՝ Բուժանիատաքի
Եահուտիլլէրտէն պահս իթմիլ վէ
անլէրին հիճրէթտէն մատտա պիւր
չարէ պուլմատըլլարընը սէօլլէ-
միլ տիւր : Գրուլ հիճրէթին հէմ
Եահուտիլլէր վէ հէմտէ Բուժանիա
իչիւն մագաթարթընը պէլան իթ-
միլ : Խախապաշը պուլա ճէվա-
պէն՝ «հիճրէթին էօնիւնիւ ալմազ
իչիւն պիւր Էօլ վար , Էանի Եա-
հուտիլլէրէ գարըլ գօնուլմուլ օլան
նիլալմարը խաֆիֆլէնտիլլէք ,
պա խուսուս գօվմազ Էախուս իս-
րաճ իթմէք իչիւն ճարի օլան գա-
նունը լալլ իթմէք , վէ Եահուտի-
լլէր բէնտի տախիլի թէչըլլաթլա-
րընտա սէրպէսթ պըրազըլմալը
տըրլար» . տէմիլ տիւր : Պու հէր
իքի թէքլիլլէր գալ հազըլ պու-
լուպ , շու քէլիլլէրի թէքլիլլէթ
իթմիլ «էլլէր իքի իւլ «էնէ սօն .
րա թէքարա պու մէմալլէք զիյա-
րէթ իտէր իսէնիլլէ ումարըմ քի
պուրատա պիւրիլլէ պիւրիլլէ
Էէնի պիւր հալ կէօրէճէրսինիլ» :

ԹԻԻՃՃԱՐԻՑԷ

ՎԱՌՆԱ , 14 Օգոստոս
ՉԱԽԻՐԷ

ՊՈՒՂՏԱՅ ԵՆԻ ՍԱԼԷՐ
Վալու Լիպ. 57-58 հքթ. 8.70/9. -
Արապալիպ. 53-62 հքթ. 7.20/10.20
ԱՐԲԱ ,
Վալու 100 քիլո 9.60/8.80
Արապա 45-50 լիպ. հքթ. 5.40/5.90
ՉԱՎՏԱՐ 7.- / 7.20
ԲԱԲԵՑԱ , 100 քիլոսը 19.50/19.60
Կիւնտէ 350.400 արապա կէլմէքտէ
տիւր :
Վալու մուլմէլլէսի ալթուր ֆը-
րանլէ , արապա կիւլիլլէ՝ նաթօ-
լէօն 21 ֆրանք :

ԱՐԱՐԱՆԻՑԷ

Նաթուրն 20.80 ֆրանք
Օսմ. լիբալը 22.90 ալթուր ֆրանք

ՏՕԹԷՐ ԹՈՐՈՍԷՆ

Մաւնապէտ ճննարկան գործարաւ .
Ասց եւ գաղտնի ինչանդոքաւնց
Երեսուն եւ հինգ տարինհրէ ի վեր
արհեստին մէջ ստացած գործնական
փորձառութենէն զատ վերջիւս շուրջ
երկու տարի ալ Բարիզ մնալով իր
մասնագիտութիւնը կատարելագործած
է : Վալլէր ճարտար թիւլի համբաւը
զինք Վաւնայի հասարակութեան յանձ-
նարարը պէտք չը ձգէր :
Կընսկի Տիւրիլ Նիքոլայի ֆի տու-
նը , Լազարքա փողոց թիւ 553 ,
Բ. Թաղ :
Հիւանդ կընդունի առաւօտնիւրը
միայն ժամը 10էն մինչեւ 12 :

Ա Ձ Դ

Պ. Նիկողոս Յ. Տօրաճաճեան Պօլ-
սեյի ազգայինին՝ որ 1896ին Վաւնա
Երեսուն էր , հասցէն ով որ գիտէ թող
բարեհաճ իմացնել հետեւեալ հասցէին՝
Տ. ՄԻՍԱԲ ՊԻԼԷՉԻՅԵԱՆ
Ֆոն 50 Բ. Օ. Պօլս հիւսիս Մաւս
(Մ. Ն. Ամերիկայի)

Одговорникъ Н. Драгулевъ

Печ. на Хр. Н. Войниковъ—Варна